ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ՀԱՅԹԱՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վաղարշապատի համայնքապետարանը հայտարարում է «Հայթաղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար տնօրենի թափուր պաշտոնի մրցույթ: Մանկապարտեզը գտնվում է Վաղարշապատ համայնքի Հայթաղ բնակավայրի Բաղրամյան 3 հասցեում: Տնօրենի աշխատավարձը կազմում է 245. 000 ՀՀ դրամ: ՀՈԱԿ-ի տնօրենն իրականացնում է հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքներով, համայնքի ղեկավարի, ավագանու որոշումներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է հաստատության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, համայնքի ղեկավարի որոշումների, սույն կանոնադրության եւ կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

Մրցույթին մասնակցելու իրավունք ունի ՀՀ այն գործունակ չափահաս քաղաքացին, ով, ըստ ՀՀ ՏԿԵ նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N 02-Ն հրամանի հավելվածի 3-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջների, համապատասխանում է ՀՀ «Նախադպրոցական կրթության մասին» օրենքի 19-րդ հոդվածով սահմանված պահանջներին, այսինքն՝ ունի նախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք /հավաստագիր/: Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը՝

1) ով դատապարտվել է հանցագործության կատարման համար, և նրա դատվածությունը մարված կամ վերացված չէ.

2) ում օրենքով արգելվել է ղեկավար պաշտոններ զբաղեցնել կամ ով զրկվել է որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից.

3) ով նախընթաց երեք տարիների ընթացքում եղել է սնանկանալու պատճառով լուծարված և իրենց պարտատերերի օրինական պահանջները չբավարարած կազմակերպության ղեկավար.

4) 65 տարին լրացած քաղաքացիները.

5) ներկայացրել է փաստաթղթեր, որոնք չեն համապատասխանում սույն կարգի ՀՀ ՏԿԵ նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N 02-Ն հրամանի հաստատված կարգի 12-րդ կետով սահմանված պահանջներին, լրիվ չեն կամ թերի են:

Մրցույթը կկայանա 2026 թվականի ապրիլի 30-ին՝ ժամը 11:00-ին, Վաղարշապատի համայնքապետարանում /հասցե՝ Սուրբ Մեսրոպ Մաշտոց փողոց, 0/ հարցազրույցի փուլով:

Դիմող քաղաքացիները Վաղարշապատի համայնքապետարան կամ Արմավիրի մարզպետի աշխատակազմ կամ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն անձամբ պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում.

2) մեկ լուսանկար՝ 3x4 չափսի.

3) քաղվածք աշխատանքային գրքույկից կամ տեղեկանք աշխատանքային գործունեության մասին.

4) ինքնակենսագրություն.

5) անձնագրի կամ նույնականացման քարտի, բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթղթի, արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի բնօրինակները և պատճենները.

6) տեղեկանք՝ մշտական բնակության վայրից.

7) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:

Մրցույթին մասնակցելու համար քաղաքացիների ներկայացրած փաստաթղթերի պատճենները չեն վերադարձվում:

Փաստաթղթերը ընդունվում են յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 10-00-ից 17:00-ը /ընդմիջման ժամը 13:00-14:00/: Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2026 թվականի ապրիլի 15-ը:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև հարցազրույցի փուլի իրավական ակտերի ցանկին ծանոթանալու համար կարող են դիմել Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմ /ք. Էջմիածին Ս. Մեսրոպ Մաշտոցի 0, հեռ. 0231-53663-120/ կամ Արմավիրի մարզպետարան /ք.Արմավիր, Աբովյան փողոց, 71/: